ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____ « ____ »_____ **2025 թ.** **ք.Երևան**

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 367-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 11-ի «Պետական գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կանոնակարգելու, պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում հաշվառված գույքի հանձնման և կոմիտեի հաշվեկշիռ գույքի ընդունման նպատակով գույքի հանձնման-ընդունման հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 367-Ա հրամանը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

11 նոյեմբեր 2024թ. № 367 -Ա

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ, ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԳՈՒՅՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի N 180-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի N 30-Լ հրամանի 19-րդ կետի 11-րդ ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը և Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում գտնվող գույքը հանձնելու ու Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշիռ պետական գույքն ընդունելու գործընթացը կանոնակարգելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարութան պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետև՝ Կոմիտե) հաշվեկշռում գտնվող գույքը հանձնելու և պետական գույքը Կոմիտեի հաշվեկշիռ ընդունելու գործընթացը կանոնակարգելու նպատակով ստեղծել գույքի հանձնման-ընդունման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) անշարժ և շարժական գույքը (այսուհետ՝ գույք) Կոմիտեի հաշվեկշիռ հանձնելու մասին համապատասխան հանձնարարականի կամ իրավական ակտի առկայության դեպքում Կոմիտեի հաշվեկշռում արտացոլելու նպատակով սահմանված ժամկետում համապատասխան միջոցներ ձեռնարկել անհրաժեշտ փաստաթղթերը (Կոմիտեին գույքը հանձնելու մասին համապատասխան հիմքերի պատճենը, գույքի հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն սույն հրամանի 1-ին և 2-րդ Ձևերի), կամ եթե գույք հանձնողն անհայտ է (գույք, որը պետական որևէ մարմնին ամրացված կամ հաշվեկշռում գրանցված չէ), ապա Հանձնաժողովի կողմից կազմված գույքի միակողմանի ընդունման ակտը համաձայն սույն հրամանի 3-րդ Ձևի, ինչպես նաև առկայության դեպքում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ բնօրինակը և հետագայում հաստատված ակտի բնօրինակները Կոմիտեի պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման, հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչություններին, իսկ շարժական գույքի դեպքում (բացառությամբ տրանսպորտային միջոցների) նաև պետական գույքի տնօրինման վարչությանը տրամադրելու ուղղությամբ.

2) գույքի մասնավորեցման կամ օտարման (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ նախարարի 2021 թվականի հունիսի 8-ի N 29-Լ հրամանով նախատեսված պահառության վայրում գտնվող հանձնման ենթակա շարժական գույքի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի), նվիրատվության և նվիրաբերության մասին համապատասխան իրավական ակտի առկայության դեպքերում և այդ իրավական ակտով կամ Կոմիտեի նախագահի հանձնարարականով սահմանված ժամկետում ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ կազմելով գույքի հանձնման-ընդունման ակտ՝ համաձայն 2-րդ Ձևի.

3) հանձնման-ընդունման աշխատանքների հետ կապված գործուղումների անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կոմիտեի գլխավոր քարտուղարին ներկայացնել առաջարկություն համապատասխան հրամանի նախագիծը շրջանառության մեջ դնելու մասին:

3. Սահմանել, որ գույքի արժեքի բացակայության դեպքում գնահատող կազմակերպության (անկախ գնահատողի) կողմից ներկայացված գնահատման եզրակացությամբ (հաշվետվությամբ) նշված արժեքը կամ անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը ներառվում է գույքի հանձնման-ընդունման ակտում (գույքի միակողմանի ընդունման ակտում) որպես գույքի արժեք:

4. Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության պետին՝

1) գույքի հանձնման-ընդունման ակտը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում կազմակերպել Կոմիտեի հաշվեկշիռ ընդունված անշարժ գույքի գրանցման աշխատանքները և ավարտից հետո յոթօրյա ժամկետում գույքի սեփականության իրավունքի վկայականի պատճենը տրամադրել պետական գույքի տնօրինման վարչությանը.

2) գույքի արդեն իսկ հաստատված հանձնման-ընդունման ակտում և անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում ամրագրված գույքի մակերեսների տարբերության, ինչպես նաև գույքի որակական և քանակական ցուցանիշների փոփոխման դեպքում նշվածի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը (գույքի հասցեների, մակերեսների, ինչպես նաև ըստ առանձին գույքային միավորների արժեքների

փոփոխությունների վերաբերյալ տվյալները) 5 (հինգ)-օրյա ժամկետում տրամադրել Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչությանը.

3) գույքի հանձնման-ընդունման ակտերին կից ստացված սեփականության իրավունքի վկայականների, ինչպես նաև փոփոխված և նոր գրանցված գույքի սեփականության իրավունքի վկայականների պատճենները տրամադրել հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչությանը.

5. Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության պետին՝

1) գույքի հանձնման-ընդունման սահմանված կարգով արդեն իսկ հաստատված ակտի, ինչպես նաև պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության կողմից տրամադրված զեկուցագրի և ճշգրտված տվյալները հավաստող համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում՝ գույքը հաշվառել Կոմիտեի հաշվեկշռում.

2) գույքի գրանցումից (վերագրանցումից) հետո ի հայտ եկած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո 3 (երեք)-օրյա ժամկետում Կոմիտեի հաշվապահական հաշվառման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ.

3) իրավական ակտով կամ համապատասխան հանձնարարականով ներկայացնել պահառության նպատակով ֆինանսավորման վերաբերյալ համապատասխան իրավական ակտի նախագիծ՝ սույն հրամանի 6-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նախագծի հետ զուգահեռ:

6. Պետական գույքի տնօրինման վարչության պետին՝

1) դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ գույքի պահառության համար անհրաժեշտ գումարի հաշվարկի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ստանալու նպատակով.

2) գույքը (բացառությամբ չկառուցապատված հողամասերը) Կոմիտեի հաշվեկշիռ փոխանցելու վերաբերյալ իրավական ակտի նախագծերում նախատեսել համապատասխան դրույթ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գույքի պահպանությունն իրականացնելու նպատակով հատկացման ենթակա ֆինանսական միջոցների վերաբերյալ.

3) անշարժ գույքի դեպքում սեփականության իրավունքի վկայականի, իսկ շարժական գույքի դեպքում՝ հանձնման-ընդունման ակտի պատճենը ստանալուց հետո եռամսյա ժամկետում կազմակերպել գույքի տնօրինման աշխատանքները.

4) գույքի տնօրինման որևէ եղանակի ընտրության անհնարինության դեպքում՝ համապատասխան հիմնավորումները ներկայացնել պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչությանը՝ գույքի հետագա պահառության աշխատանքները կազմակերպելու համար:

7. «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենին՝

1) պետական գույքի տնօրինման վարչությունից համապատասխան տեղեկատվությունը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում պետական գույքի տնօրինման և հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչություններին ներկայացնել գույքի պահառության համար անհրաժեշտ գումարի հաշվարկը՝ համապատասխան հիմնավորումներով.

2) պահառության համար անհրաժեշտ գումարը հատկացնելու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Կոմիտեի հաշվեկշիռ ընդունված գույքի պահառությունը:

8. Գույքի հանձնման-ընդունման աշխատանքներ իրականացնելիս հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներից ստեղծում է առնվազն երկու հոգուց բաղկացած աշխատանքային խումբ՝ գույքի գտնվելու վայր գործուղվելու և տեղում անշարժ ու շարժական գույքի (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ նախարարի 2021 թվականի հունիսի 8-ի N 29-Լ հրամանով նախատեսված պահառության վայրում գտնվող հանձնման ենթակա շարժական գույքի, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի) ուսումնասիրություններ անցկացնելու համար:

9. Ուժը կորցրած ճանաչել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2023 թվականի ապրիլի 20-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում հաշվառված գույքի հանձնման և կոմիտեի հաշվեկշիռ գույքի ընդունման նպատակով գույքի հանձնման-ընդունման հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու ու պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2022 թվականի փետրվարի 2-ի N 30-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 180-Ա հրամանը:

10. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

X _____

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՁԵՎ N 1

<u>ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ</u>

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024—թ. ————ի թիվ ——– Ա հրամանով ստեղծված հանձնաժողովը մի կողմից (այսուհետ՝ Ընդունող), և ——— ——————————————————————————————— մյուս կողմից (այսուհետ՝ Հանձնող), ստորագրեցին սույն ակտն այն մասին, որ Հանձնողը հանձնեց, իսկ Ընդունողն ընդունեց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնվող ——————————————— գույքը *(Տրանսպորտային միջոցների համար՝ նաև մակնիշը, պետ. համարանիշը և նույնացման համարը, թափքը, գույնը, հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ), թողարկման և շահագործման տարեթվերը և այլն):*

Գույքի ընդունման դեպքում Գույքի սկզբնական արժեքը (Գույքի շուկայական գնահատված արժեքը), իսկ անշարժ գույքի ընդունման դեպքում՝ Գույքի սկզբնական արժեքը (Գույքի շուկայական գնահատված կամ անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը) ——————————— դրամ, նշել հասցեն, ընդհանուր մակերեսը -------- քառ.մետր (որից նկուղ՝ -------քառ.մետր, կիսանկուղ՝ -------քառ.մետր)»:

Գույքի մաշվածությունը ——————————— դրամ,

Գույքի մնացորդային (հաշվեկշռային) արժեքը ——————————— դրամ,

Գույքի շահագործման տարեթիվը _____ թ.,

Գույքի ձեռքբերման տարեթիվը _____ թ.,

Այլ տվյալներ ——— ——————————————————————

Գույքը հանձնեց	**Գույքն ընդունեց**
_____	Հանձնաժողովի կազմ
_____	_____
(ստորագրությունը)	_____
Կ.Տ.	___ _____ __ թ.

Ձև N2

<u>ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ</u>

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024թ. —————ի թիվ ——- --Ա հրամանով ստեղծված հանձնաժողովը մի կողմից (այսուհետ՝ Հանձնող), և ————— ————————————————————————————————----------- մյուս կողմից (այսուհետ՝ Ընդունող),

ստորագրեցին սույն ակտն այն մասին, որ Հանձնողը հանձնեց, իսկ Ընդունողն ընդունեց ՀՀ կառավարության ——- թվականի ——————————---------ի թիվ ———— որոշմամբ մասնավորեցված (օտարված) ——————————— հասցեում գտնվող ———————————————————————— ընդհանուր մակերես և ———————————————————————————— արժեք ունեցող անշարժ գույքը: *(Տրանսպորտային միջոցների համար՝ նաև մակնիշը, պետ. համարանիշը և նույնացման համարը, թափքը, գույնը, հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ), թողարկման և շահագործման փարեթվերը և այլն):*

Գույքի ընդունման դեպքում Գույքի սկզբնական արժեքը (Գույքի շուկայական գնահատված արժեքը), իսկ անշարժ գույքի ընդունման դեպքում՝ Գույքի սկզբնական արժեքը (Գույքի շուկայական գնահատված կամ անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը) ———————————— դրամ, նշել հասցեն, ընդհանուր մակերեսը --------- քառ.մետր (որից նկուղ՝ -------քառ.մետր, կիսանկուղ՝ -------քառ.մետր)»:

Գույքի մաշվածությունը ——————————— դրամ,

Գույքի մնացորդային (հաշվեկշռային) արժեքը ——————————— դրամ,

Գույքի շահագործման տարեթիվը _________ թ.,

Գույքի ձեռքբերման տարեթիվը _________ թ.,

Այլ տվյալներ ———-:

Գույքը հանձնեց	**Գույքն ընդունեց (գնորդ)**
Հանձնաժողովի կազմ	___________________________
_______________	_______________
_____________________	
________________	(ստորագրությունը)

Ձև N 3

<u>ԳՈՒՅՔԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ</u>

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2024թ. ————————ի թիվ ——— -Ա հրամանով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ Ընդունող) ստորագրեց սույն ակտն այն մասին, որ Գույք հանձնողն անհայտ է) և Ընդունողը միակողմանի ընդունեց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնվող ——————————————————— գույքը *(Տրանսպորտային միջոցների համար՝ նաև մակնիշը, պետ. համարանիշը և նույնացման համարը, թափքը, գույնը, հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ), թողարկման և շահագործման տարեթվերը և այլն):*

Գույքի ընդունման դեպքում Գույքի սկզբնական արժեքը (Գույքի շուկայական գնահատված արժեքը), իսկ անշարժ գույքի ընդունման դեպքում՝ Գույքի սկզբնական արժեքը (Գույքի շուկայական գնահատված կամ անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը) ——————————————— դրամ, նշել հասցեն, ընդհանուր մակերեսը -------- քառ.մետր (որից նկուղ՝ -------քառ.մետր, կիսանկուղ՝ -------քառ.մետր)»:

Գույքի մաշվածությունը ——————————————— դրամ,

Գույքի մնացորդային (հաշվեկշռային) արժեքը ——————————————— դրամ,

Գույքի շահագործման տարեթիվը _____ թ.,

Գույքի ձեռքբերման տարեթիվը _____ թ.,

Այլ տվյալներ ————-:

Գույքն ընդունեց

Հանձնաժողովի կազմ

_____

_____

_____

____ _____ ____ թ.

Հավելված
Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2024 թվականի «_____» «____» -ի
N _____ - Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԳՈՒՅՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Գոռ Աղաբաբյան	Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության պետ, հանձնաժողովի նախագահ
Արմինե Անանյան	Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի ավագ հաշվապահ, հանձնաժողովի անդամ
Ռոման Արշակյան	Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության տնտեսական բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Նաիրա Եդիգարյան	Իրավաբանական վարչության իրավական ապահովման և դատական ներկայացուցչության բաժնի գլխավոր իրավաբան, հանձնաժողովի անդամ
Արմեն Քոչարյան	Պետական բաժնեմասի կառավարման վարչության պետական մասնակցությամբ ընկերությունների կառավարման և մոնիտորինգի բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Վարդուհի Սաֆարյան	Պետական բաժնեմասի կառավարման վարչության պետական մասնակցությամբ ընկերությունների կառավարման և մոնիտորինգի բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Կարեն Գալոյան	Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության պետական գույքի մշտադիտարկման և վերլուծության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Արտյոմ Ծատուրյան	Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության պետական գույքի մշտադիտարկման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Շողակաթ Էլբակյան	Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության պետական գույքի մշտադիտարկման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Էդգար Հայրապետյան	Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Արսեն Աբգարյան	Պետական բաժնեմասի կառավարման վարչության մասնավորեցման նախապատրաստման և լուծարման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Արսեն Մկրտչյան	Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Գարիկ Բոյաջյան	Պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչության պետական գույքի մշտադիտարկման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Ռուզաննա Քյոսայան	Կոմիտեի գլխավոր քարտուղարի օգնական, հանձնաժողովի անդամ»: